

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի առաջընթացի

1. Որոշման N 2 հավելվածի 1-ին կետի («1. Ինտեգրված կադաստրի կառավարման, կազմակերպման և խորհրդատվական մարմինների ստեղծում») ապահովման նպատակով Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի հունիսի 18-ի N 149-Լ հրամանով ստեղծվել է կոմիտեի ղեկավարին կից ինտեգրված կադաստրի ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի խորհրդակցական մարմինը (աշխատանքային խումբ): Կազմակերպվել են 2 աշխատանքային նիստեր: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում Կադաստրի կոմիտեի ստանդարտացված տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի ստեղծման նպատակով համագործակցել ենք Հայաստանի Հանրապետություն ժամանած «LX Korea» ընկերության հետ:

2. Որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի («3. Բազային տարածական տվյալների շտեմարանի ճշգրտում, արդիականացում, օպտիմալացում և ստանդարտացում») ապահովման նպատակով օրթոֆոտոհատակագծերի հիման վրա իրականացվում են բազային շերտի ստեղծման և թվայնացման աշխատանքներ՝ 1:2000 և 1:10000 մասշտաբով:

3. Որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի («5. Գեոպորտալի օգտատերերին և օգտվողներին համակարգից օգտվելու համապատասխան լիազորությունների սահմանում») կապակցությամբ հայտնում ենք, որ ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգը հագեցված է օգտվողներին ըստ իրավունքների խմբերի և գեոխմբերի տարանջատելու հնարավորությամբ: Իրավունքների խմբով սահմանվում են համակարգում գործողությունների կատարման իրավունքները, իսկ գեոխմբով՝ քարտեզագրական շերտերի հասանելիությունը: Համակարգում հնարավոր է ավելացնել տարբեր իրավունքներ, ինչպես նաև սահմանել նոր իրավունքի խմբեր և գեոխմբեր: Ներկայումս, բացի «Ադմինիստրատոր» իրավունքի խմբից, ավելացվել են հետևյալ խմբերը՝

- միայն դիտման համար,
- խմբագրման համար,
- պետական կառավարման մարմիններ,
- մարզպետարաններ,
- ենթակառուցվածքներ:

4. Որոշման N 2 հավելվածի 8-րդ կետի («8. Անհրաժեշտության դեպքում նոր կարգավորումների, այդ թվում՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստանդարտների, նախագծերի մշակում») ապահովման նպատակով մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ««Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-431-Ն օրենքը:

Կադաստրի կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N ՍԹ/12078-2021, 2022 թվականի փետրվարի 2-ի N ՍԹ/939-2022 գրություններով շահագրգիռ մարմինների համաձայնեցմանն է ներկայացվել «ՀՀ-ում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը, ինչպես նաև բոլոր շահագրգիռ մարմիններին, այդ թվում՝ կոմիտեի ղեկավարին կից աշխատանքային խմբի անդամներին կարծիքի է ուղարկվել տարածական տվյալների շերտերի ցանկը և ուղեցույցները: Կարծիքները ամփոփվելուց հետո, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի պահանջների համաձայն, կներկայացնենք ՀՀ վարչապետի աշխատակազմ:

5. Կատարվել են մետատվյալների կատալոգի վարման կարգի և կառուցվածքի համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ստեղծման աշխատանքներ:

6. Որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի («12. Գեոպորտալի և մետատվյալների շտեմարանի ներդրում և լիարժեք վերագործարկում») ապահովման նպատակով ստեղծվել է մետատվյալների շտեմարանի նախնական տարբերակը: Հավաքագրվել և ազգային գեոպորտալի մետատվյալների կատալոգ է մուտքագրվել 34 մետատվյալ:

7. Հավաքագրվում է 1:10000 մասշտաբի տոպոքարտեզների մասին տեղեկատվություն, կատարվում է քարտեզագրում՝ հետագայում ազգային գեոպորտալ մուտքագրելու նպատակով:

8. Որոշման N 2 հավելվածի 13-րդ կետի («13. Հասցեների միասնական ռեեստրի և USSԵ-ի ինտեգրում») ապահովման նպատակով հասցեների համեմատության և ճշգրտման համար Հայաստանի բոլոր համայնքներ է ուղարկվել այդ համայնքների բնակավայրերի հասցեավորված գույքերի՝ կոմիտեում առկա հասցեների ցանկը՝ համեմատելու այդ տվյալները համայնքներում առկա տվյալների հետ: Ներբնակավայրային աշխարհագրական անվանումների ճշգրտման և քարտեզներում դրանց տեղակայման նպատակով իրականացվել են Հայաստանի Հանրապետության բոլոր բնակավայրերի ներբնակավայրային աշխարհագրական անվանումների ճշգրտման և տեղադիրքի որոշման աշխատանքներ: Աշխատանքներն

ավարտելուց հետո ստացվել են շուրջ 38000 ճշգրտված անվանումներով և տեղադիրքերով թվային քարտեզների վրա տեղադրված ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտներ: